ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀՐԱՆՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ

Համաշխարհայնացման ու ազատականացման գործընթացներով ապրող Երկիր մոլորակն արագ փոփոխվում է, փոքրանում, ձևավորվում են տեղեկատվական և հաղորդակցական նոր իրողություններ, և այս պայմաններում յուրաքանչյուր պետություն վերաձևակերպում է իր անելիքներն ու առաջնահերթությունները:

Սրընթաց զարգացումների հետ մեկտեղ ծառանում են նոր մարտահրավերներ՝ ահաբեկչություններ, պատերազմներ, բնակչության տեղաշարժեր, այլատյացություն, բռնություններ, հարուստ և աղքատ երկրների միջև բևեռացում, թրաֆիքինգ, թմրամոլության աճ, բնական աղետներ, աղքատություն, քաղաքական վարչակարգերի փոփոխություններ, որոնք պատճառ են դառնում նորանոր սփյուռքների ձևավորման: Այս իրավիճակում Սփյուռքը նոր դերակատարություն է ստանձնում. այն այսօր դարձել է միջազգային հարաբերությունների կարևորագույն տարր, իսկ սփյուռքագիտությունը հավակնում է իր ընդգծված տեղն ունենալու գիտությունների համակարգում:

Նախքան սփյուռքագիտության հիմնախնդիրներին անդրադառնալը, ներկայացնենք «Սփյուռք» հասկացության գիտական մի քանի սահմանում:

Դեռևս Հին Հունաստանում քաղաք-պետությունը իր բնակչությանը տեղաշարժել է դեպի գրավյալ տարածքներ և այդ մարդկանց խումբն անվանել «Սփյուռք»: «Սփյուռք» բառի հունարեն համարժեքն է «dia»՝ ծայրից ծայր և «speirein»՝ ցրում[1]: Եբրայերենում «Սփյուռք» եզրույթը գործածվել է՝ բնորոշելու համար հրեաների աքսորը Պաղեստինից:

Ամերիկյան տեսաբան Վիլյամ Սաֆրանը «Սփյուռք» է համարում այն գաղթական համայնքները, որոնք՝

1) սփռվել են նախահայրենիքից (կենտրոնից) դեպի օտար (ծայրամասային) շրջաններ,

2) ունեն հավաքական հիշողություն, տեսլական կամ առասպել իրենց իսկական հայրենիքի, դրա գտնվելու ֆիզիկական վայրի, պատմության և նվաճումների մասին,

3) հավատացած են, որ անհնար է ամբողջությամբ անդամագրվել ընդունող հասարակությանը, ուստի և մասամբ օտարված են զգում իրենց,

[1] http://www.merriam-webster.com/dictionary/diaspora

4) նախնիների հայրենիքին վերաբերվում են որպես իրենց իսկական, իդեալական հայրենիքի, ուր իրենք կամ իրենց զավակները պետք է վերադառնան,

5) հավաքական ուժերը նվիրաբերում են հայրենիքի պահպանությանը կամ վերականգնմանը, անվտանգությանն ու բարեկեցությանը,

6) շարունակում են անհատապես կամ զգայականորեն կապված մնալ այդ հայրենիքին, որով էլ պայմանավորված է նրանց համերաշխությունը և էթնոհամայնքային գիտակցությունը[2]:

Հրեական սփյուռքի մասնագետ Գաբրիել Շեֆերը «Սփյուռքը» սահմանում է հետևյալ բնութագրիչներով՝

1) առանձնահատուկ հավաքական ինքնության պահպանում և այդ ինքնության դրսևորման հնարավորությունների ընդլայնում,

2) հայրենիքում և ընդունող երկրում առկա ինքնակազմակերպման ձևից տարբերվող ներքին կազմակերպական համակարգի գոյություն,

3) զգալի շփումներ հայրենիքի հետ՝ իրական կապերի և խորհրդանիշների առկայություն[3]:

Ըստ էթնիկ հարցերով ամերիկյան փորձագետ Ռոջերս Բրուբեյքրի՝ «Սփյուռքը» յուրօրինակ պահանջ է և կեցվածք, որը բնութագրվում է հետևյալ երեք չափանիշներով՝

1. սփռվածություն. ցնցման հետևանքով կամ բռնի հեռացման պատճառով պետական սահմաններից դուրս հայտնվելը, ինչպես նաև էթնիկ հայրենիքի սահմաններից անդին հոծ համայնքներ ձևավորելը,

2. հայրենամետ կողմնորոշումը դեպի իրական կամ երևակայական (մտատիպային) հայրենիքի արժեքները՝ որպես ինքնության աղբյուր,

3. սահմանային տարանջատումը՝ ընդունող երկրի հիմնական ազգային ինքնությունից տարբերվելը, որպես Սփյուռքի պահպանման անհրաժեշտ պայման[4]:

Սփյուռքի սահմանման բարդությունը ստիպում է խորամուխ լինել այն պատճառների և պայմանների մեջ, որոնք հանգեցրել են Սփյուռքի ի հայտ գալուն[5]: Սփռվելու պատճառներից հատկանշական

---

[2] Տե՛ս **Safran W.**, Diasporas in Modern Societies: Myths of Homeland and Return. Diaspora: A Journal of Transnational Studies 1, Volume 1, № 1 (1991), էջ 83-84, http://europeofdiasporas.eu/sites/default/files/posts/files/3.%20Safran%20Diasporas%20in%20Modern%20Society.pd

[3] Տե՛ս **Sheffer G.**, «Mobilized and proletarian diasporas», American Political Sciences Review in 1976 (Dorai et al., 1998), **Sheffer G.**, A New Field of Study: Modern Diasporas in International Politics, Gabriel Sheffer (ed.) Modern Diasporas in International Politics, 1986, London: Croom Helm, էջ 1-15, **Lisa Anteby-Yemini et William Berthomière**, «Diaspora: A Look Back on a Concept», *Bulletin du Centre de recherche français à Jérusalem*, 2005, էջ 262-270, https://bcrfj.revues.org/257#ftn1

[4] Տե՛ս **Brubaker R.**, The «Diaspora» diaspora. Ethnic and Racial Studies, vol. 28, № 1, 2005, էջ 1-19, http://www.sscnet.ucla.edu/soc/faculty/brubaker/Publications/29_DiasporadiasporaERS.pdf

[5] Տե՛ս **Sideri E.**, The Diaspora of the Term Diaspora: A Working-Paper of a Definition, 2008, էջ 32-47, http://transtexts.revues.org/index247 (պետք է նկատել, որ Սիդերին չի սահմանում «Սփյուռքի զարգացում» հասկացությունը):

են բռնի տեղահանումը, պետականության կորուստը, վտարումը, բռնի աքսորը կամ կամավոր տարագրումը, արտագաղթը, միգրացիան, բռնատիրական վարչակարգը: Ինքնության առանձնահատկություններից ելնելով՝ կարելի է առանձնացնել կրոնական (հրեական), ազգային (հայկական, հնդկական), էթնիկ (քրդական, քաշմիրի), տարածաշրջանային (կարիբյան), աշխարհամասային (աֆրիկյան) Սփյուռքի օրինակները[6]:

Հայտնի սփյուռքագետ Ֆիլիպ Կուրտինը (ԱՄՆ) «Սփյուռքը» դասակարգել է՝ հիմք ընդունելով սփյուռքյան խմբի նախնական գործունեությունը, օրինակ՝ առևտուրը: Գլոբալացման, միգրացիայի և Սփյուռքի ուսումնասիրությունների գծով տեսաբան Ռոբին Կոհենը առանձնացրել է Սփյուռքի հետևյալ տիպերը՝ որպես տուժող, զոհ (օրինակ՝ աֆրիկյան, հայկական, հրեական, պաղեստինյան), աշխատանքային (աշխատանք փնտրելու հետևանքով առաջացած, օրինակ՝ թուրքական), առևտրային (առևտրային կամ ներդրումային նպատակով, օրինակ՝ չինական, լիբանանյան), կայսերական (կայսերապաշտական նպատակներին ծառայելու համար, օրինակ՝ բրիտանական և ֆրանսիական) և մշակութային (օրինակ՝ կարիբյան)[7]:

Ըստ հայտնի սփյուռքագետ, «Diaspora» հանդեսի խմբագիր Խաչիկ Թոլոյանի՝ «Սփյուռք» հասկացությունը մեր օրերում մի շարք իմաստներ ունի. եթե նախկինում «Սփյուռք» տերմինը կիրառվել է հրեաների, հույների և հայերի տարածումը նկարագրելու առումով, ապա այժմ ունի ավելի լայն իմաստ և ընդգրկում է այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «ներգաղթող», «հայրենիքից վտարված», «փախստական», «աշխատանքային միգրանտ», «աքսորված համայնք», «վերահսկող համայնք» և «էթնիկ համայնք» բնորոշումները[8]: Նշելով, որ «Սփյուռքին սպառնում է լայն հասկացություն դառնալու վտանգը», Թոլոյանը պնդում է «սահմանումների խստություն» կիրառելու անհրաժեշտության մասին[9]: Որպես եզրույթի տարբերակիչ առանձնահատկություններ՝ նա հիմնականում առանձնացնում է սփռվածությունը, էթնո-ազգային ցավագին հիշողությունը, հավաքական ինքնությունը, հայրենիքի նկատմամբ ունեցած հավատարմությունը:

Նրա մեկնաբանությամբ՝ «անդրազգային» տերմինի հիմքում ընկած է «Սփյուռքը», իսկ «համաշխարհայնացում» տերմինի հիմքում՝ «անդ-

---

[6] Տե՛ս **Butler K.**, Defining Diaspora, Refining a Discourse, Diaspora 10 (2), 2001, էջ 189-219:

[7] Առավել մանրամասն տե՛ս **Cohen R.**, Global Diasporas: An Introduction. Second edition, London and New York, 2008, http://prodiasporaromana.org/wp-content/uploads/2014/01/Cohen-2008-Global-Diasporas-An-Introduction-2n-Bookos.org_.pdf

[8] Տե՛ս **Tölölyan Kh.**, The Nation-State and its Others: In Lieu of a preface, էջ 4, http://sites.middlebury.edu/nydiasporaworkshop/files/2011/04/D-1-1-1991-TololyanKhachig-nationStateanditsOthers-Preface.pdf

[9] Տե՛ս **Tölölyan Kh**., Rethinking Diaspora(s): Stateless Power in the Transnational Moment, Diaspora: A Journal of Transnational Studies, Volume 5, Number 1, Spring 1996, էջ 3-36, https://muse.jhu.edu/article/411228/pdf

բազգայինը»: Խոսելով «Հայկական սփյուռքի՝ տեղահանության հետևանքով կերտված ազգայնականությունից դեպի սփյուռքյան անդրազգայնություն անցում կատարելու» մասին՝ Թոլոլյանը նշում է, որ Հայկական սփյուռքը գլոբալ երևույթ է և կազմված է տվյալ երկրին բնորոշ «էթնիկ» առանձնահատկություններ ունեցող համայնքներից: Հայկական սփյուռքի գլխավոր առանձնահատկություններն են կազմակերպվածությունը, մի շարք հաստատությունների առկայությունը, որոնք ստեղծվել են համայնքի կարիքներից ելնելով և երբեմն օժտված են նաև հստակ անդրազգային օրակարգերով: Այսպիսով, սփյուռքյան համայնքը կրում է էթնիկ և սփյուռքյան մշակութային ինքնությունների համադրությունը, ինչպես նաև քաղաքական փորձառությունը[10]:

Սփյուռքագետների մեծ մասը նշում է Սփյուռքի երեք հիմնական առանձնահատկություն. առաջին առանձնահատկությունն առնվազն երկու ուղղություններով սփռվածությունն է, երկրորդը՝ իրական և երևակայական (մտատիպային) հայրենիքի միջև կապի առկայությունն է, երրորդը սփյուռքյան ինքնության մասին իրազեկվածությունն է, որը միավորում է տարբեր երկրներում ապրող հայրենակիցներին[11]: Սրանց կարելի է ավելացնել նաև չորրորդը՝ պատմության և ժամանակի տարրը, պատմական հիշողությունը, քանի որ Սփյուռքին հատուկ է բազմասերնդայնությունը, որն անհատական միգրացիան միակցում է հավաքական պատմությանը և հիշողությանը:

Սփյուռք երևույթը հարուցում է բազմաթիվ հարցադրումներ՝ ի՞նչ կամ ո՞վ է Սփյուռքը, որո՞նք են դրա առաջացման պատճառները և հիմնական ժամանակաշրջանները, Սփյուռքը դրակա՞ն, թե՞ բացասական երևույթ է, ինչպիսի՞ք են Սփյուռքի հեռանկարները, ի՞նչ ապագա է սպասվում Սփյուռքին, ինչպիսի՞ն է կապը մայր հայրենիքի հետ, որո՞նք են նրա վերպետական գործառույթները, որքանո՞վ է այն ընդունված տվյալ պետությունում և այլն: Այս և նման այլ հարցեր դեռևս լուրջ քննարկումների և գիտական ուսումնասիրությունների կարիք ունեն: Ճշմարտության դեմ չմեղանչելու համար նշենք, որ վերջերս ավելանում է գիտնականների հետաքրքրությունը Սփյուռքի տարբեր ասպեկտների ուսումնասիրման, դրանց վերլուծության և «Սփյուռք» հասկացության մեկնաբանման նկատմամբ: Շրջանառության մեջ են դրվել այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «սփյուռքացում» (diasporization), «վերասփյուռքացում» (rediasporization), «ապասփյուռքացում» (de-diasporization), «սփյուռքագիտություն» (diasporology) և այլն: Սփյուռքյան (diasporic և diasporan) որոշիչը կիրառվում է՝ նկա-

[10] Տե՛ս **Tölölyan Kh**., Elites and Institutions in the Armenian Transnation, Diaspora: A Journal of Transnational Studies, Volume 9, Number 1, Spring 2000, էջ 107-136, https://muse.jhu.edu/article/444315/pdf

[11] Առավել մանրամասն տե՛ս **Butler K.**, Defining Diaspora, Refining a Discourse, Diaspora 10 (2), 2001, էջ 189-219, http://sites.middlebury.edu/nydiasporaworkshop/files/2011/04/Defining-Diaspora1.pdf

բազրելու համար քաղաքացիությանը, ազգային գիտակցությանը, ինքնությանը, ցանցերին, մշակույթին, կրոնին բնորոշ երևույթներ: Համալսարաններում աստիճանաբար ընդլայնվում է Սփյուռքի հանդեպ գիտական հետաքրքրությունը, իսկ պետական համակարգը լուրջ ուշադրություն է դարձնում Սփյուռքի հետ հարաբերություններին:

Թեև ողբերգական ցնցումը և հավաքական ինքնության պահպանման ձգտումը դասական Սփյուռքին բնորոշ հատկանիշներն են, սակայն արդի ժամանակաշրջանում Սփյուռքի ձևավորման պատճառները խիստ տարբեր են կամավոր միգրացիայից:

Հատկանշական է նաև, որ Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո ասիական և մերձավորարևելյան գաղութներից զանգվածային միգրացիա և ներհոսք է տեղի ունեցել գաղութատիրական երկրներ: Միգրացիան մի կողմից ցրում է մարդկանց՝ որպես կենտրոնախույս ուժ, իսկ Սփյուռքը նրանց կրկին միավորում է՝ որպես կենտրոնաձիգ ուժ:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Սփյուռքը ձևավորվում է գաղթի, աքսորի, կրթական, մշակութային, աշխատանքային միգրացիայի, քաղաքական վտանգավոր իրավիճակներից խուսափելու և բազմաթիվ այլ գործոնների հետևանքով, հավաքական ինքնագիտակցության, պատմական հիշողության, հայրենիքի հետ զգացական կապի պահպանմամբ, համախմբվում է ընդհանրություն ունեցող անհատների, կառույցների և հաստատությունների լուրջ դերակատարության շնորհիվ:

Հայրենիքն ու հայրենիքի շուրջ հյուսված առասպելը, հիշողությունը սփյուռքյան ինքնագիտակցության կարևոր հիմնատարրերն են: Հայրենիքի ընկալումը և պատկանելության զգացումը ոչ միայն նպաստում են ներհամայնքային կապերի սերտացմանը, այլև խթանում սփյուռքանդամների ակտիվ ներգրավվածությունը ընդունող երկրի և հայրենիքի սոցիալական, տնտեսական և քաղաքական գործընթացներում, իսկ հաճախ էլ համայնքի անդամները դառնում են պետական քաղաքականության սուբյեկտ թե՛ հայրենիքի և թե՛ ընդունող երկրների կառավարությունների համար: Սփյուռքի, հայրենիքի և ընդունող երկրի միջև առկա եռակողմ հարաբերությունների համակարգում մեծ դեր է վերապահված Սփյուռքի կարողություններին և գործունեության նպատակներին: Քաղաքականության մեջ Սփյուռքի դերի մեծացումը մարտահրավեր է արտաքին քաղաքականության որոշումների կայացման ավանդական ձևերին, իսկ համաշխարհայնացումն ավելի շատ նպաստում է Սփյուռքի չմիջնորդավորված մասնակցությանը քաղաքական հարցերին, քան սահմանափակում վերջինիս գործունեությունն օտար կառավարությունների լոբբինգով:

Արդի ժամանակաշրջանում Սփյուռքը համարվում է միջազգային համակարգի «անխուսափելի» տարր մի քանի պատճառներով: Նախ՝

սփյուռքյան համայնքները կարող են ինքնուրույնաբար ինքնակազմակերպվել՝ դառնալով ազդեցիկ գործոն ինչպես հայրենիքի, այնպես էլ ընդունող երկրի քաղաքականության համար: Ավելին, որպես անդրազգային համայնք՝ Սփյուռքն ընդունակ է ուղղակի համագործակցելու այլ պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ՝ շրջանցելով հայրենիքի և ընդունող երկրի կառավարություններին: Այնուամենայնիվ, ազգային պետությանն առանցքային դեր է վերապահված սփյուռքյան ինքնության ձևավորման, ինչպես նաև Սփյուռքի գործողություններն ուղղորդելու հարցերում:

Սփյուռքի բազմակողմ հարաբերությունները՝ ներհամայնքային շփումները, հայրենիքի հետ երկկողմ, Սփյուռքի, հայրենիքի և ընդունող երկրի միջև եռակողմ հարաբերությունները, ինչպես նաև Սփյուռքի ազդեցությունը միջազգային հարաբերությունների վրա ցույց են տալիս, որ Սփյուռքն օժտված է անդրազգային հատկանիշներով: Այնուամենայնիվ, Սփյուռքը, որպես անդրազգային ինքնության ցանցի ուրույն մոդել, պատմականորեն սահմանափակվել է որոշակի ազգային, էթնոկրոնական հատկանիշներով: Ազգայնականությամբ են պայմանավորված եղել Սփյուռքի ներքին փոխհարաբերությունները, քաղաքական կողմնորոշումները, ինչպես նաև տնտեսական ռազմավարությունը: Հատկանշական է, որ սկզբնական շրջանում ազատական տեսությունները Սփյուռքը դիտում էին որպես քաղաքական և սոցիալական զարգացման սոսկ անցումային փուլ, որը դատապարտված է անէացման՝ մշակութային, սոցիալական և քաղաքական հանդուրժողականության պատճառով:

Թեպետ պետությունները փորձել են կանոնակարգել միգրացիան՝ ենթադրելով, որ միգրանտ խմբերը պետք է ձերբազատվեն էթնիկ ինքնությունից, սակայն արտագաղթի ահագնացող ծավալների հետևանքով բազմաթիվ ազդեցիկ երկրներ հրաժարվել են ուծացման քաղաքականությունից կամ չեն կարողացել գտնել բոլորին մեկ միասնական մշակույթի մեջ միավորելու բանաձևը: Երրորդ աշխարհից դեպի Արևմուտք ներգաղթողները նպաստել են բազմամշակութայնությանը և մշակութային տարբերությունների վերաբերյալ խնդիրների բարձրաձայնմանը՝ իրենց պահանջատիրության հիմք դարձնելով մարդու համընդհանուր իրավունքների առաջնայնության սկզբունքը՝ առանց հրաժարվելու ազգային ինքնությունից: Եվրոպա տեղաշարժված միգրանտները, փախստականները դրա վառ ապացույցն են: Հենց այս համատեքստում է, որ Սփյուռքը սկսել է ընկալվել ոչ թե սահմանափակ, այլ որպես համամարդկային արժեքներ կրող գաղափարական հասկացություն:

Սփյուռքները և՛ նման են, և՛ միմյանցից շատ տարբեր: Միջազգային դիվանագիտական ատյաններին զուգահեռ՝ ակտիվորեն գործում են տարբեր սփյուռքների ժողովրդական դիվանագիտության, լոբբիս-

տական և այլ կառույցներ: Սփյուռքները դարձել են կարևորագույն գործոն՝ տիրապետելով ծանրակշիռ ֆինանսատնտեսական ու սոցիալ-քաղաքական լծակների, կարողանում են տվյալ հասարակությանը պարտադրել իրենց կենցաղն ու բարքերը:

Սփյուռքների ներկայացուցիչները, լինելով տարբեր մշակութային արժեքների կրողներ, առաջընթացի նոր հնարավորություններ են ընձեռում մարդկությանը, ստեղծում քաղաքակրթությունների երկխոսության ու փոխառնչությունների ուրույն միջավայր: Նրանք ապրում են երկու «ես»-ով, երկու կամ ավելի մշակութային համակարգերում:

Հատկապես վերջին կեսդարյա պատմությունը վկայում է, որ սփյուռքների միջավայրում հանդուրժողականության առկայության պայմաններում տարբեր մշակույթների երկխոսության միջոցով կարող են ձևավորվել ինչպես համամարդկային մնայուն արժեքներ, այնպես էլ դրսևորվել անընդունելի երևույթներ:

Համաշխարհայնացումը պարարտ հող է նախապատրաստել սփյուռքյան ինքնության կերպափոխման, գոյություն ունեցող արժեքների վիճարկման համար՝ մարտահրավեր նետելով Սփյուռքի միատարրությանը: Մի կողմից՝ հարցականի տակ են դրվել Սփյուռքի հիմնարար արժեքները՝ հայրենիքին նվիրվածության, հայրենիքի հանդեպ պատասխանատվության և էթնիկ համերաշխության գաղափարները, իսկ մյուս կողմից՝ պետական կառավարման համակարգում սկիզբ է դրվել Սփյուռքի հանդեպ դրսևորվող քաղաքականությանը՝ այնպիսի հաստատությունների և ծրագրերի ներդրմամբ, որոնք ուղղված են տվյալ պետության՝ իր սահմաններից դուրս սեփական հասարակության՝ որպես համայնքի կազմավորմանը, քաղաքացիական իրավունքների և ազատությունների պաշտպանությանը, պատասխանատվության սահմանմանը:

Պետություն-Սփյուռք փոխհարաբերությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ պետության և սփյուռքյան գործող կառույցների միջև առկա է սերտ համագործակցություն, որը նպաստում է համայնքների ինքնակազմակերպմանը, սակայն կան նաև տարերայնորեն առաջացող ու չկարգավորված հարաբերություններ:

Ակնհայտ է, որ յուրաքանչյուր երկիր ձգտում է իր Սփյուռքի ներուժն առավելագույնս նպատակամղել իր սոցիալ-տնտեսական, գիտակրթական, բնապահպանական և այլ հիմնախնդիրների լուծմանը, ըստ այդմ՝ համապատասխան քաղաքականության մշակմանն ու իրականացմանը:

Մեր կարծիքով, այդ քաղաքականության հիմնական բաղադրիչներն են պետությունն ու Սփյուռքը և նրանց փոխհարաբերությունը, այսինքն՝ ինչպես է նրանցից յուրաքանչյուրը օժանդակում մյուսին:

Ի՞նչ է ակնկալում ընդհանրապես հայրենի պետությունը Սփյուռքից.

- հայրենիքի հեղինակության, միջազգային վարկի բարձրացման

գործում աջակցություն, հասարակական դրական կարծիքի ձևավորում, իրազեկման, լոբբիստական աշխատանքների կազմակերպում,

- ֆինանսական աջակցություն՝ բարեգործության, ուղղակի ներդրումների տեսքով,
- Սփյուռքում կուտակված ներուժի, այդ թվում՝ գիտելիքների, փորձի, ստեղծարար կարողությունների, կապերի, հնարավորությունների օգտագործում հայրենիքի տնտեսության զարգացման համար,
- Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդում՝ բոլոր բնագավառներում, հատկապես բիզնեսի, կրթության, գիտության, առողջապահության և մշակույթի ոլորտներում:

Իսկ ի՞նչ է ակնկալում Սփյուռքը հայրենի պետությունից, ի՞նչ պետք է անի հայրենիքը՝ որպես պետություն Սփյուռքին օժանդակելու հարցում.

- օգնել Սփյուռքին ինքնակազմակերպման հարցերում՝ կազմակերպություններ, դպրոցներ, հոգևոր-մշակութային կենտրոններ հիմնելու միջոցով,
- ընդունել երկքաղաքացիության ինստիտուտը՝ դրսում ապրող հայրենակիցներին հնարավորություն տալով ստանալու հայրենիքի քաղաքացիություն կամ տրամադրել հատուկ կացության կարգավիճակ,
- աջակցել մասնագիտական ընկերակցությունների և համապատասխան ցանցերի ստեղծմանը,
- աջակցել մայր հայրենիքի հետ կապերի սերտացմանն ու զարգացմանը՝ հայրենիքում համապատասխան կառույցների ստեղծմամբ:

Իհարկե, հայրենիքն ու Սփյուռքն ունեն համատեղ գործելու, համատեղ խնդիրներ լուծելու տեսլական, որը տարբեր ժամանակներում կարող է տարբեր լինել: Աշխարհի, պետության, ազգի առջև ծառացած մարտահրավերներն են նաև նախանշում այն առաջնահերթությունները, որոնք դառնում են հայրենիքի և Սփյուռքի՝ տվյալ պահի հիմնական մտահոգությունն ու գործունեության գերակա ոլորտը:

Սփյուռքի հետ տարվող աշխատանքից անմասն չեն մնում նաև միջազգային կառույցները, քանի որ գնալով մեծանում են բնակչության տեղաշարժերը: Ըստ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի տվյալների՝ տարբեր երկրներ և հատկապես՝ Արևմուտք, ներգաղթյալների և փախստականների թիվը 2015 թ. հասել է 244 մլն-ի, որը 71 միլիոնով գերազանցում է 2000 թ. տվյալները[12] և ըստ էության կազմում է միջազգային հանրության 3,3 տոկոսը, այսինքն՝ մեր մոլորակի յուրաքանչյուր 35-րդ բնակիչ դարձել է միջազգային միգրանտ: Եթե Սփյուռքը պայմանականորեն համարենք առանձին երկիր, ապա բնակչության թվով Չինաստանից, Հնդկաստանից, ԱՄՆ-ից, Ինդոնեզիայից հետո այն կլինի ամենամեծ «երկիրը»: Եվ եթե միգրացիան շարունակվի այս չափերով, ա-

[12] Տե՛ս «International Migration Report 2015», Department of Economic and Social Affairs, United Nations, New York, 2016, էջ 4, http://www.un.org/en/development/desa/population/ migration/publications/migrationreport/docs/MigrationReport2015_Highlights.pdf

պա մինչև 2050 թ. ծագման երկրից դուրս ապրողների թիվը կանցնի 320 միլիոնից[13]:

Համաշխարհային բանկը, Եվրոպական հանձնաժողովը և ՄԱԿ-ը արժևորում են Սփյուռքի դերը տնտեսական զարգացման և ընդհանրապես միջազգային հարաբերությունների ակտիվացման գործում:

2007 թ. ՄԱԿ-ի և Բելգիայի կառավարության կազմակերպած համաժողովի շրջանակում քննարկվել են սփյուռքյան և միգրանտների կազմակերպությունների՝ իրենց հայրենիքին աջակցություն ցուցաբերելու հետևյալ ուղղությունները՝ առողջապահություն, կրթություն, շահերի պաշտպանություն և լոբբինգ, իրազեկման մակարդակի բարձրացում, շահույթ հետապնդող գործունեության իրականացում և այլն՝ այդպիսով խթանելով արտագաղթողների ներդրումը հայրենիքի զարգացման գործում, ֆինանսական աջակցությունը քաղաքացիական հասարակության կազմակերպություններին, ազգային կառավարություններին, տեղական իշխանություններին և միջազգային կազմակերպություններին:

ՅՈՒՆԵՍԿՕ-ն սահմանել է Սփյուռքի մրցանակ, որը տրվում է Սփյուռքում ապրող աֆրիկացի գիտնականներին՝ Աֆրիկայում կազմակերպվող գիտաժողովներին մասնակցելու համար՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ աֆրիկյան և արաբական երկրներից արտագաղթած որակյալ մասնագետները կարող են կարևոր դերակատարություն ունենալ իրենց երկրների զարգացման գործում[14]:

1980 թ.-ից ի վեր ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը իր «Գիտելիքի փոխանցում արտագաղթյալ հայրենակիցների միջոցով» (TOKTEN) ենթածրագրի շնորհիվ աշխարհի ավելի քան 35 երկրներում Սփյուռքի անհատներին հնարավորություն է ընձեռում իրենց հայրենիքի մասնավոր և հանրային հատվածներին փոխանցելու մասնագիտական գիտելիքներ և մատուցելու քաղաքական խորհրդատվություն, ինչպես նաև կատարելու անհրաժեշտ հետազոտություններ[15]:

Հատկանշական է, որ ՄրքԱրթուր հիմնադրամը[16] (MacArthur Foundation) խրախուսում է Սփյուռքի և կառավարությունների միջև ինստիտուցիոնալ հարաբերությունները, Սփյուռքի որակյալ մասնագետների մասնակցությունը միջազգային կապիտալի հոսքերի ուղղորդմանը, Սփյուռքի ազդեցությունը հայրենիքի պետական բարեփոխումների ընթացքի վրա և նման թեմաներով հետազոտությունների անցկացումը:

---

[13] Տե՛ս «Աշխարհում միգրանտների թիվը 2050 թվականին կգերազանցի 320 միլիոնը». ՄԱԿ, http://www.armenpress.am/arm/news/846659/asjkharhum-migrantneri-tivy-2050-tvakanin-kgerazanci-320-miliony.html

[14] Տե՛ս ANSTI Diaspora Grants, http://www.ansti.org/index.php/fellowships/ansti-diaspora-grants

[15] Տե՛ս Transfer of Knowledge through Expatriate Nationals (TOKTEN), http://www.ps.undp.org/content/papp/en/home/operations/tokten.html: Նաև՝ http://www.toktenlebanon.org/

[16] Հիմնվել է 1970 թ. ԱՄՆ-ում, ծրագրեր է իրականացրել 50 երկրում, գրասենյակներ ունի Հնդկաստանում, Մեքսիկայում և Նիգերիայում (տե ս https://www.macfound.org/):

«Եվրոպայի սփյուռքների մասին» 2005 թ. Բարսելոնայի հռչակագիրը[17] թերևս միջազգայնորեն ընդունված միակ փաստաթուղթն է, որը կոչ է անում Սփյուռքը դիտել որպես եվրոպական քաղաքացիության անբաժանելի մաս, որի հետ գործընկերությունը Եվրամիության հզորացման գրավականն է: Հռչակագիրը խրախուսում է սփյուռքյան ցանցերի և հանրային իշխանությունների, ինչպես նաև ներցանցային համագործակցությունը բոլոր բնագավառներում:

Ըստ այսմ՝ կարող ենք եզրակացնել, որ օրըստօրե հզորացող Սփյուռքն իր ծանրակշիռ ներդրումն է ունենում թե՛ հայրենիքի, թե՛ բնակության երկրի տնտեսական, սոցիալական, քաղաքական, էթնոմշակութային, աշխարհաքաղաքական ոլորտներում: Արդի պայմաններում մի կողմից ընթանում են սփյուռքների ձուլման, մյուս կողմից՝ նրանց ինքնակազմակերպման ու հզորացման բարդ գործընթացներ:

Դեռևս 2009 թ. Աթենքում Միգրացիայի և զարգացման երրորդ գլոբալ ֆորումի (GFMD) ընթացքում տեղի ունեցած կառավարական հանդիպման ժամանակ մասնակիցները ևս մեկ անգամ ընդգծեցին ծագման երկրների զարգացման գործում սփյուռքների կարևոր դերը և ստեղծեցին սփյուռքների ներգրավման գործընթացին ուղղված «ճանապարհային քարտեզ»[18], որի նպատակն էր քարտեզագրել Սփյուռքի ընդգրկման աշխարհագրությունը և հմտությունները, մատնանշել նպատակները, հաստատել ծագման և հյուրընկալող երկրների կառավարությունների ու սփյուռքների միջև փոխադարձ վստահության վրա հիմնված հարաբերություններ, ինչպես նաև մոբիլիզացնել Սփյուռքը՝ ՄԱԿ-ի՝ Հազարամյակի զարգացման նպատակների մշակմանը և իրականացմանը նպաստելու համար:

Աշխատանքային դրական փորձի փոխանակմանը, Սփյուռքի հետ կապերի կատարելագործմանը և կուտակված խնդիրների քննարկմանն էր նվիրված ՀՀ սփյուռքի նախարարության կողմից 2011թ. Երևանում գումարված «Սփյուռքի հեռանկարները գլոբալացվող աշխարհում» միջազգային համաժողովը, որի ընթացքում քննարկվեցին Սփյուռքի առաջացման պատճառներին, զարգացումներին, հայրենիքի հետ երկկողմ, Սփյուռքի, հայրենիքի և ընդունող երկրի հետ եռակողմ հարաբերություններին, ինչպես նաև միջազգային ասպարեզում Սփյուռքի դերակատարությանը, լոբբինգի իրականացման ձևերին, դրանց անդրազգային հատկանիշներին վերաբերող շատ հարցեր: Համաժողովում ընդունվեց հայտարարություն, որով կոչ է արվում ՄԱԿ-ին, միջազգային այլ կազմակերպություններին՝ ձեռնարկել Սփյուռքի

[17] Հռչակագիրն ընդունվել է 2005 թ. հունվարին Բարսելոնայում տեղի ունեցած «Եվրոպայի սփյուռքները և եվրոպական քաղաքացիություն» խորագրով համաժողովում:

[18] «Greece GFMD 2009», Third Meeting of the Global Forum on Migration and Development, 2-5 November 2009, Athens, Greece, http://www.gfmd.org/meetings/greece2009.

հիմնախնդիրները միջազգայնորեն ուսումնասիրելուն և անհրաժեշտ կառուցակարգեր մշակելուն ուղղված քայլեր:

Մեր առաջարկությամբ Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) կողմից 2013թ. Ժնևում գումարվեց «Միգրացիայի շուրջ միջազգային երկխոսության» (ՄՄԵ) շրջանակներում Սփյուռքի հարցերով նախարարական համաժողով[19], որտեղ գլխավոր զեկուցողներից մեկը Հայաստանի ներկայացուցիչն էր: Ըստ այդմ՝ ՀՀ սփյուռքի նախարարությունն առաջարկեց ՄԱԿ-ի կողմից ստեղծել Սփյուռքի հարցերով զբաղվող աշխատանքային խումբ՝ ընդգծելով սփյուռքների իրավունքների վերաբերյալ ՄԱԿ-ի կոնվենցիա կամ հայտարարություն ընդունելու անհրաժեշտությունը:

Հատկանշական է, որ ներկայումս տարբեր պետություններում Սփյուռքի նկատմամբ քաղաքականության, ինչպես նաև Սփյուռքի հիմնախնդիրներով զբաղվելու համար ստեղծվում են պետական մարմիններ, որոնք ունեն նախարարության, գործակալության, վարչության կարգավիճակ կամ գործում են որպես ազգային կամ տեղական անկախ կառույցներ: Նման մարմինների թիվն անցնում է 60-ից:

Ի մի բերելով սփյուռքագիտության առաջադրած կարևորագույն խնդիրները և Սփյուռքի նկատմամբ տարբեր պետությունների մշակած ռազմավարության փորձը, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների գործունեությունը, անհրաժեշտ ենք համարում քննարկել՝

1) ՄԱԿ-ում Սփյուռքի հարցերով առանձին հանձնախումբ ստեղծելու հարցը, ինչը թույլ կտա միջազգային կառույցների մակարդակով ուսումնասիրել տարբեր երկրների և սփյուռքների հետ աշխատանքի փորձը, համագործակցության ձևերն ու միջոցները՝ կատարելագործելու եղած կառուցակարգերը, պատրաստելու ճանաչողական, ուսուցողական, տեղեկատվական նյութեր (ֆիլմեր, գրքույկներ և այլն), մշակելու և իրականացնելու համագործակցության անհրաժեշտ ծրագրեր, որոնք կնպաստեն համընդհանուր արժեքների խթանմանը և գլոբալ համագործակցության ընդլայնմանը:

Մասնավորապես, այսօր միջազգային մակարդակում Սփյուռքի իրավունքների և պարտականությունների սահմանումը դարձել է առաջնահերթ խնդիր, որի լուծումը հնարավորություն կընձեռի պետություններին հստակեցնելու Սփյուռքի հանդեպ պետական ռազմավարությունը և գործունեության եղանակները:

2) Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սփյուռքյան կառույցները կարևոր կապող օղակ են դառնում հայրենիքի և ընդունող երկրների միջև, մասնավորապես՝ ժողովրդավարության, մարդու իրավունքների պաշտպանության, աղքատության հաղթահարման և այլ հարցերում,

[19] Տե՛ս «Diasporas and Development: Bridging Societies and States», Diaspora ministerial conference International Conference Centre Geneva (CICG), 18-19 June 2013, № 22, International dialogue on migration, International Organization for Migration (IOM):

անհրաժեշտ է ինստիտուցիոնալացնել Սփյուռքի և հայրենիքի միջև երկկողմ, Սփյուռքի, հայրենիքի և ընդունող երկրի միջև եռակողմ, ինչպես նաև Սփյուռքի և միջազգային կառույցների միջև բազմակողմ հարաբերությունները: Ավելին, ինչպես միջպետական հարաբերությունների, այնպես էլ բազմակողմ հարաբերությունների համատեքստում Սփյուռքը պետք է դիտել որպես մշակութային երկխոսության օբյեկտ՝ խթանելու և պաշտպանելու սփյուռքյան ինքնությունը, ավանդույթները և արժեքները:

3) Համաշխարհայնացման պայմաններում, մի կողմից ազգայնականությունը սկսել է իր տեղը զիջել համընդհանուր արժեքներին և աշխարհաքաղաքացիությանը, իսկ մյուս կողմից ակնհայտորեն գլուխ է բարձրացնում ազգայնամոլությունը: Ուստի անհրաժեշտ է, որ պետությունները և սփյուռքյան համայնքները կարողանան որոշակիացնել փոխհարաբերություններն արդյունավետ կառուցելու գաղափարական հենքը և դրա զարգացման տեսլականը:

4) Կարևորելով Սփյուռքի հետազոտությունների նշանակությունը՝ անհրաժեշտ է խրախուսել սփյուռքագիտության՝ որպես գիտության համակարգված զարգացումը և, իհարկե, Սփյուռքի հանդեպ պետական արդյունավետ ռազմավարության մշակումն ու իրականացումը խթանող միջոց՝ ակտիվացնելով երկխոսությունը Սփյուռքի գիտական հետազոտությունների ոլորտում:

5) Փախստականների և միգրանտների չդադարող հոսքը, հատկապես՝ դեպի Եվրոպա և Արևմուտք, միջազգային հանրությանը ստիպում է առավել ուշադիր և համակարգված ուսումնասիրել սփյուռքյան գործընթացներն ու զարգացումները, որպեսզի միջպետական և միջազգային մակարդակներում դրանք ներկայացվեն պատշաճ ձևով, այսինքն՝ իրականացվեն միջազգային կազմակերպությունների և կառավարությունների ձևաչափով, բխեն մարդու և քաղաքացու համընդհանուր իրավունքներից ու ազատություններից:

Կարծում ենք, որ Հայաստանը՝ որպես դարավոր և հզոր Սփյուռք ունեցող երկիր, կարող է նախաձեռնել ՄԱԿ-ի գագաթնաժողովներից մեկը սփյուռքյան հիմնահարցերին նվիրելու գործընթաց՝ քննարկելու Սփյուռքի դերը վերպետական և միջպետական հարաբերություններում, Սփյուռքի գործոնը երկկողմ հարաբերություններում, Սփյուռք-Սփյուռք կապերը, Սփյուռքի ծագման երկրի և բնակության երկրի միջև փոխհարաբերությունները, ինչպես նաև Սփյուռքի իրավունքների ու պարտականությունների շրջանակը: Նշված հարցերը միջազգային իրավունքի տեսանկյունից ուսումնասիրված չեն, և դրանց քննարկումները կնպաստեն Սփյուռքի մասին ՄԱԿ-ի հռչակագիր կամ կոնվենցիա ընդունելու գործընթաց նախաձեռնելու:

Բանալի բառեր - *Սփյուռք, Հայրենիք, ինքնություն, մարտահրավեր, արտագաղթ, միգրացիա, Հայաստան-Սփյուռք գործակցություն, հայկական համայքներ, միջազգային կառույցներ*

ГРАНУШ АКОПЯН – ***Актуальные проблемы диаспороведения.*** – В статье анализируется всё более значительная роль, которую диаспора играет в политологии, диаспороведении, а в известной степени также при взаимодействии с международными организациями. Обсуждаются перспективы развития диаспоры, место и значение диаспороведения как новой дисциплины в системе наук и в этом контексте – подходы к определению термина *диаспора*, проявленные различными учёными.

Ключевые слова: *диаспора, родина, идентичность, вызов, иммиграция, миграция, международные организации*

HRANUSH HAKOBYAN – ***Contemporary Issues of Diaspora Studies.*** – The article analyzes the main features of the new role of Diaspora in political science, Diaspora studies, and why not, cooperation with international organizations. The prospects of development of the diaspora, the role and importance of Diaspora studies, as a new branch in the sciences and in this context the approaches and definitions of the term "diaspora" put forward by various scientists.

Key words: *Diaspora, Homeland, identity, challenge, immigration, migration, international organizations*